Չարենցավան համայնքի ղեկավար
պրն Հ.Շահգալդյանին

ՁԵԿՈՒՅՑԱԳԻՐ

Հայտնում եմ ձեզ, որ Շվեյցարիայի զարգացման եվ համագործակցության գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման եվ համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում, ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով, ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի եվ կայուն զարգացման նպատակների՝ համայնքներում տեղայնացման նպատակով կազմակերպված դրամաշնորհային մրցույթին ներկայացվել և հաստատվել է «Չարենցավանի քաղաքային զբոսայգու ոռոգման ցանցի վերակառուցման ծրագիրը»:

Ծրագրի իրականացման նպատակով կատարվել են նախագծանախահաշվային աշխատանքները, որոնց համաձայն ծրագրի ամբողջական արժեքը կազմել է **25,510,000** (քսանհինգ միլիոն հինգ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ: Դրամաշնորհի չափը կազմում է **13,500,000** (տասներեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ: Կարիք կա համայնքի կողմից ծրագրի համաֆինանսավորման՝ դրամաշնորհի գումարը գերազանցող մասի չափով: Համայնքի բյուջեից համաֆինանսավորման ակնկալվող չափը կազմում է **12,010,000** (տասներկու միլիոն տաս հազար) ՀՀ դրամ:

Շինարարական աշխատանքների իրականացման համար մրցույթի արդյունքում համայնքի բյուջեից համաֆինանսավորման չափը կարող է նվազել, իսկ դրամաշնորհի մասը կմնա անփոփոխ:

Սույնով խնդրվում է Ձեր աջակցությունը՝ բյուջեում նշված փոփոխությունների կատարման, և բյուջեից համապատասխան հատկացում կատարելու համար:

Համայնքապետարանի զարգացման ծրագրերի
և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ՝ Ա. Ծերունյան

08 հուլիսի 2025թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է՝ «08» 07 2025թ.
Մուտքագր. № 3524 Փաստաթղթերի թիվ 04